

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին

Պատմական աննախադեպ ժամանակաշրջան ապրող մեր ժողովրդի կյանքում կարևորագույն երևույթ է 1995 թվականի ապրիլի 3—8-ը տեղի ունենալիք կրոնական և ազգային պատմական մեծ նշանակություն ունեցող Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ազգային-Եկեղեցական Ժողովը, Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մեջ:

Այս օրերին համայն հայության համակ ուշադրությունը սևեռված է Սուրբ Էջմիածնին:

Արցախահայությունը հույս է հայտնում, որ Ազգային-Եկեղեցական Ժողովը և Ամենայն Հայոց 131-րդ Կաթողիկոսի ընտրությունը նոր ազդակ կհանդիսանա հայության տարբեր հատվածների միասնության, Սփյուռք-Հայրենիքի կապերի ամրապնդման, մեր ժողովրդի նվիրական իղձերի իրականացման ճանապարհին:

Հարգանքներով՝

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Կ. ԲԱԲՈՒՐՅԱՆ

Ստեփանակերտ,
4 ապրիլի 1995 թ.